Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**


Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

# ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
**Արտակ Մաղալյան**

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
**Արամ Սիմոնյան** – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

*ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ*

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՄԱԳՐԱՎՈՒՄԸ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Բողոքականության ալիքները հայության միջավայր գալիս էին տարբեր կենտրոններից: Արևմտահայության մեջ առաջին բողոքական քարոզիչները եկան ԱՄՆ-ից, իսկ Արևելյան Հայաստան՝ Եվրոպայից:

Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի վախճանից (1828 թ.) մինչև Բաղդասար եպիսկոպոսի՝ Արցախում միտրոպոլիտ նշանակվելու ժամանակաշրջանը, օտար միսիոներներն ակտիվ գործունեություն ծավալեցին Շուշիում: Ռուսական կառավարությունը, նպատակադրվելով մահմեդական և այլ ոչ քրիստոնյա հպատակների մեջ քրիստոնեական հավատը տարածել, ինչպես նշել է Մաղաքիա արք. Օրմանյանը, 1823 թ. «արտօնած էր Հելուետիոյ Բասիլիա (Basel) աւետարանական յարանուանութեանց անդամներէն երկուքը Շուշի հաստատուիլ եւ այդ նպատակին աշխատիլ»[1]: Սակայն շուտով պարզվեց բազելցի միսիոներների բուն նպատակը: Նրանք, իբրև թե մահմեդականներին չկարողանալով դարձի բերել (ինչն իրականում իրոք դժվարին խնդիր էր), բուռն գործունեություն ծավալեցին հայերի միջավայրում: Սկզբնական ժամանակաշրջանում, հոգևոր վտանգը չգիտակցելով, հայ հասարակության տարբեր խավեր ոգեշնչվեցին նրանց մշակութային գործունեությամբ: Ինչպես նշել է Մ. Օրմանյանը, «Հայերն ալ նորութեանց հետամուտ՝ շուտով գրաւուեցան, մինչեւ իսկ եկեղեցականներ ալ անոնց համակրեցան եւ յարեցան»[2]: 1827 թ. Շուշիում բազելցի միսիոներներ Ավգուստ

---

[1] *Մ. Օրմանեան*, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, էջ 4296:
[2] Նույն տեղում:

Դիտրիխը ու Ֆելիցիան Զարեմբան ավետարանական ուսումնարան բացեցին, որի աշակերտների թիվը մեկ տարում հասավ 130-ի: Շուտով Շուշիում բացվեց ևս երկու դպրոց: Գյուղերում ևս բացվեց երեք դպրոց՝ յուրաքանչյուրը 20–30 աշակերտներով: Իրենց կրթական-դավանափոխական գործունեությանը զուգահեռ միսիոներները զարկ տվեցին տպարանային գործին: Ընդ որում, կրոնաբարոյական գրքերի հրատարակությունները նրանք իրականացնում էին աշխարհաբարով[3]:

Ինչպես նշել է Մ. Օրմանեանը, «Երբոր գործը հետզհետէ կ'ընդարձակուէր, Ազգային Եկեղեցւոյ հաւատացելոց եւ պաշտօնէից մէջ դժգոհութիւններն ալ շատցան, էջմիածին ալ զգացուեցաւ, եւ Եփրեմ կաթողիկոս իր վերջին օրերը կառավարութեան դիմեց, եւ Կարբեցիին ալ կրկնելու հարկ եղաւ»[4]:

Եփրեմ կաթողիկոսը 1830 թ. հոկտեմբերի 8-ին «իր հրաժարականին բացաձայն ծանօթութիւնը» հանձնել էր սինոդին[5]: Հոկտեմբերի 15-ին սինոդը Եփրեմ կաթողիկոսին տեղեկացրել էր, որ ցավով լսեց նրա վերջնական հրաժարագիրը և խնդրեց կնիքը իր մոտ պահել մինչև նոր օծյալը նստի կաթողիկոսական աթոռին[6]: Հովհաննես Կարբեցին 1831 թ. մարտի 16-ին ընտրվեց և հունիսի 30-ին հաստատվեց Ամենայն Հայոց կաթողիկոս[7]:

1830 թ. սեպտեմբերի 12-ին «Բարձր բարեծնունդ կառավար երկրիս Ղարաբաղու» Ալեքսանդր Միխայլովիչ Միկլաչևսկուն ուղղվել է մի գրություն, որում հակիրճ ամփոփված են

[3] Շուշիի տպարանից լույս տեսան հայերեն և այլ լեզուներով բազմաթիվ գրքեր (*Բ. Կարապետեան*, Շուշի բերդաքաղաքը (Պատմութիւնը մինչեւ 1920 թ.), Ե., 2000, էջ 166–167):

[4] *Մ. Օրմանեան*, նշվ. աշխ., էջ 4296:

[5] *Ա. Երիցեանց*, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 602:

[6] Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա-Բ, 1780–1834, Թիֆլիս, 1893, էջ 262–265:

[7] *Մ. Օրմանեան*, նշվ. աշխ., էջ 4163–4164, 4168:



այն հիմնադրույթները, որոնցով ապացուցվում է միսիոներների քարոզչության վտանգավորությունը: Բողոքը գրված է եզակի դեմքով. *«Ես ոգւով չափ ուրախ լինէի, եթէ փաստորքն գերմանացի ուսուցանէին մանկանց իմոյ ազգի միմիայն զգիտութիւն մարմնական, առանց վնաս հասուցանելոյ Սուրբ եւ Առաքելական Եկեղեցւոյ նոցին: Սակայն նոքա ընդ կաթին գիտութեան ջամբեն մանկանց զարիւն հերետիկոսութեան, ըստ որում են ինքեանք»:* Այնուհետև գրության մեջ համառոտ կերպով բերվում են գերմանացի միսիոներների քարոզած դավանաբանության առաջացման պատճառը և դրա դրույթները. *«Քանզի աղանդապետ նոցին Մարտինոս Լուտեր կրօնաւոր գերմանացի ապստամբեցոյց զբազումս ի Սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ, եւ ուսոյց զերկու խորհուրդս եկեղեցւոյ միայն ընդունիլ՝ զմկրտութիւն եւ զհաղորդութիւն, եւ ոչինչ համարել զպսակ, զկարգ քահանայութեան, զապաշխարութիւն, զդրոշմն եւ զվերջին օծումն, որովք հաստատի Եկեղեցին ուղղափառաց Յունաց, Հռովմայեցւոց եւ Հայոցս: Եւ ուսոյց իւրոցն, ի բաց հերքել զամենայն արտաքին արարողութիւնս Եկեղեցւոյ Սրբոյ, եւ զՆորին հանդիսաւոր զարդս. խոտել ուսոյց զսրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութիւն եւ ամենայն սրբոց, եւ զնոցին պատուական մասունս անարգել եւ արհամարհել: Նաեւ ոչինչ համարել զծոմապահութիւն եւ զվիճակ մաքուր կուսութեան... Վասն որոյ պարտականութիւն իմ է մաքրել զեկեղեցի Սուրբ՝ չտալով հրաման աշակերտել մանկանց իմոյ ազգին այնպիսի աղանդաւորաց, որք հրաման ունենալով քարոզել զԱւետարանն մահմէտականաց, քարոզեն զիւրեանց թիւր վարդապետութիւն ազգիս Հայոց, որ ի հազար հինգհարիւր ամաց հետէ ընդ Սուրբ Եկեղեցւոյ Յունաց կապակցեալ փայլէ ուղղափառ վարդապետութեամբ: Զարմանալին այս է. զի ի միջոցի հազար հինգհարիւր ամաց ոչ ոք լուաւ, թէ հայ ոք համարձակեալ իցէ ասել, թէ սուտ է բարեխօսութիւն սուրբ Աստուածածնի եւ ամենայն սրբոց, կամ պատուել զպատկերս կռապաշտութիւն է. իսկ այժմ, ի գալ փաստորաց*

*համարձակ ասեն աշակերտք նոցին զայնպիսիս, ուրեմն փաստորքն են պատճառ այսոցիկ հայհոյութեանց: Ես որպէս յառաջն ասացի սիրող եմ գիտութեանց, բայց ոչ հերետիկոսութեանց, զի որպէս Կայսերական եկեղեցւոյ է դաւանութիւն, նոյնպէս եւ մերն, եւ հակառակն եկեղեցւոյ մերում, հակառակ է Կայսերականին. եւ դուք զայսչափս իմանալով ողջ լերուք»:*

Նամակը ստորագրել է Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի փոխանորդ («ի կողմանս Ղարաբաղու եւ այլոց») Զաքարիա վարդապետը: Վավերագրի վերջում՝ ձախ կողմից, ամսաթվին («Յամրոցս Շուշուայ ի 12 սեպտեմբերի 1830») հաջորդում է. «Վկայիմք՝ որ ի ամենայն բանիցն: Մէսրոբ արքեպիսկոպոս: Մահտէսի տէր Առաքել: Մահտեսի տէր Աստվածատուր: Տէր Խաչատուր Գրիգորեան: Տէր Ստեփան: Քահանայք Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն»: Իսկ Զաքարիա վարդապետի ստորագրությանը աջ կողմից հաջորդում են հետևյալ ստորագրությունները. «Պօղոս վարժապետ վարդապետ եւ յաջորդ: Տէր Կարապետ: Տէր Յովհաննէս: Տէր Գրիգոր: Տէր Թադէոս: Քահանայք Ամենափրկիչ եկեղեցւոյ»[8]:

Ըստ սույն վավերագրի ներկայիս հրատարակության ենթավերնագրի՝ այն ներկայացված է եղել «Շուշիի հասարակայնութեան» կողմից, իսկ վերջում էլ նույն կերպ գրված է. «Բազմաթիւ ստորագրութիւններ»[9]: Նախ և առաջ, այստեղ վավերագրի գրանցման համարը նշված է 63, այնինչ դա վրիպակ է, քանի որ բնագրում 68 է: Երկրորդ, ինչպես պարզ երևում է ստորագրությունից և գրության՝ առաջին դեմքով գրված լինելուց, դրա հեղինակը Զաքարիա վարդապետն է: Երրորդ՝ վավերագրի վերին ձախ անկյունում Զաքարիա վարդապետը գրել է. «Պատճէն թղթոյն զոր կամէի տալ տեղւոյս նաչալնիկին, սակայն առ ղուբերնատորն յղեցի»: Չորրորդ, «բազմաթիւ ստորագրութիւնները» պատկանում են Արցախի թեմի հոգևորականությանը[10]:

Զաքարիա վարդապետը, հիմք ընդունելով իր նախորդ գրությունը, մեկ այլ գրություն ուղարկեց Ալեքսանդր Միխայլովիչի վերադասին[11]՝ զգուշացնելով միսիոներների քայքայիչ գործունեության մասին: Այս գրության սկզբում կրկնվում է նախորդի բովանդակությունը, այնուհետև ասվում է. *«...Ի գալն իմ այսր գործով հոգեւորականաւ, տեսի եւ հաւաստեցի, զի փաստորքն լուտերականքն, որք ընկալեալ ունելով զհրաման քարոզելոյ զԱւետարանն անհաւատից եւ չկարողանալով, սկսեալ են զմանկունս հայոց քրիստոնէից ծրի ուսուցանել, եւ ըստ կաթին գիտութեան խառնել զարիւն հերետիկոսութեան, ասելով մանկանցն, թէ սուտ է բարեխօսութիւն սրբուհւոյ Աստուածածնի եւ ամենայն սրբոց, եւ անարգելի են մասունք սրբոց, եւ զպատկերս պատուել կռապաշտութիւն է....: Զայսոսիկ ես, ի թուղթ արձանացուցեալ՝ վկայութեամբ քահանայական դասու՝ կամէի տալ տեղւոյս նաչալնիկ բարձր բարեծնունդ Ալէքսանդր Միխայէլովիչ Միկլաչէվսկոյն. սակայն իմանալով, թէ նա եւս զայսմանէ Ձեզ ունի յայտնել, համարձակեցայ զնոյն գրութիւն առ Ձեզ առաքել ի վերծանութիւն...»:*

Զաքարիա վարդապետը հատուկ նշում էր, «...պարտականութիւն իմ է մաքրել զԵկեղեցի Սուրբ՝ չտալով հրաման աշակերտել մանկանց իմոյ ազգին», և այնուհետև՝ «Խնդրեմ ուրեմն խոնարհաբար ի Գերազանցութենէ Ձերմէ գրել զայսմանէ ուր արժանն է, զի փաստորքն դադարեսցին յուսուցանելոյ եւ ի քարոզելոյ մանկանց հայոց զաղանդն իւրեանց, որ է ներհակ Կայսերական Սուրբ Եկեղեցւոյ, զի մի գուցէ ծագեսցի աղմուկ խռովութեան ի հասարակութենէ եւ բազումք ի ռամ-

[8] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 68, վավ. 419բ:

[9] Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության, գիրք Թ, կազմեց՝ Ս. Բեհբուդյանը, Ե., 2001, էջ 58:



[10] Այդ ստորագրությունները ինքնըստինքյան մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի պատմությունը ուսումնասիրելիս:

[11] Գրության հրատարակիչը նշել է, որ նամակը ուղղված է եղել «Ելիզավետպոլի նահանգապետին» (ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 59):

կաց կարծելով՝ թէ փաստորաց թիւր քարոզութիւն հրամանաւ կայսեր է՝ թուլասցին ի ջերմեռանդութենէ, որ առ տէրութիւն»: Զաքարիա վարդապետի նամակի վերջավորությունը և ստորագրությունը հետևյալն է. «Որպէս ամենասրբազան պատրիարգն մեր գրեալ է աւասիկ զայսմանէ առ Գերազանցութիւն Ձեր, նոյնպէս ինձ պարտ վարկայ գրել»: Այստեղ եւս Զաքարիա վարդապետը ստորագրել է որպես Հայոց ամենասրբազան պատրիարքի, այսինքն՝ կաթողիկոսի փոխանորդ[12]:

Այստեղ հիշատակված *ամենասրբազան պատրիարքը* գրության թվագրումով (1830 թ. սեպտեմբերի 24) Եփրեմ կաթողիկոսն է[13]: Նա մինչ Զաքարիա վարդապետի գրությունը ռուսական կայսրության պաշտոնյաներին արդեն տեղեկացրել էր միսիոներների քայքայիչ գործունեության մասին:

Ինչպես տեսնում ենք, այն ժամանակ բողոքական քարոզությունը Հայ Առաքելական եկեղեցու հայրերն ընկալում էին որպես հերետիկոսություն, որի սերմանման եղանակները և դրանից եկող վտանգները այնպես էին ընկալվում, ինչպես մեր օրերում աղանդավոր քարոզիչների գործունեությունը: Ընդհանրապես դարեր շարունակ Հայ Առաքելական եկեղեցու հայրերը կարողացել են, հայ ժողովրդի հոգևոր ոլորտներին սպառնացող վտանգի դեպքում, ճիշտ գնահատել իրավիճակը և պահպանել սուրբ հավատը սրբապղծումից:

Չնայած բազելցի քարոզիչները ջանացին արդարանալ, թե իրենք հայերին հրապուրող չեն, ռուսական կառավարությունը 1835–1837 թթ. հրամանագրերով արգելեց նրանց գործունեությունը[14]. նրանք հեռացվեցին Շուշիից, սակայն իրենց գործունեությունը շարունակեցին Շամախիում:

[12] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 68, վավ. 419ա:

[13] Այս կարգով ճշտվում է նաև Եփրեմ կաթողիկոսի՝ ռուսական կառավարությանը ուղարկած դիմումի մասին Մ. Օրմանյանի վերոհիշյալ հաղորդման թվագրումը:

[14] Այս ժամանակաշրջանում ռուսական կայսրությունում հաստատվել էր «Պոլոժենիե» անունով հայտնի՝ Հայ Առաքելական եկեղեցուն վերաբերող կանոնադրությունը (1836 թ. մարտի 11):



Բողոքականությունը հայերի միջավայրում հաստատվեց ոչ թե բուն Հայաստանում, այլ օտարության մէջ՝ Կոստանդնուպոլսում 1847 թ.[15]:

Թե՛ *Ռեֆորմացիան* և թե՛ նրա բովանդակած բողոքականությունը օտար երևույթ էին հայ ժողովրդի համար: Ավելին, այն ժամանակ, երբ հրամայական խնդիր էր օտար տիրապետության դեմ համախմբվելու անհրաժեշտությունը, միսիոներական քարոզչությունը դավանաբանության և հասարակական ոլորտներում պառակտիչ դեր էր կատարում: Ինչպես միջնադարում քաղկեդոնականությունը, այնպես էլ XIX դարում բողոքական միսիոներությունը պարտություն կրեց Արցախում:

[15] *Մ. Օրմանեան*, նշվ. աշխ., էջ 4292–4294: